

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԻՄԲԱԳՐՈՊԵՏ Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խնդրահարկ

1. Յուսահարկութիւններ ... 193

Դասախօսք եւ Հրատարակախօսք.

2. Ձեւաչափում — Ռ. Փեռիկ —
(Ս. ԵՐԿԱՆԵԱՆ) 195

3. Դպրոց եւ բարոյական դաս-
տիարակութիւն — Փրոֆ. Լ.
Ժ. Վառե — 201

4. Մարմնական մաքրութիւն 207

Դիտարկում Լուրեր եւ Երուրիւններ

5. Քաղաքակրթութիւնը եւ
ժննդակահուցութիւնը 213

6. Փանտախաղ Օսէտայի մու-
կերուն մէջ 214

7. Կայծակին պատճառած չա-
րիքները 215

Վերջին Հրատարակութիւններ

8. «Արտէմիս» (Մ. Պ.) 215

9. Հայոց Թ. Հ. Դպրանոց-
ների կանոնագրութեան
նախագիծը (Մ. Պ.) 217

10. Վարակիչ Հիւանդութիւն-
ներ եւ նրանց թոյնը .. 218

Թերթների փոխարեկ

11. Վախը — Փրոֆ. Թ. Մուս —
(Մ. ՄԱԼԱՔԵԱՆ) 219

Յայտարարութիւններ —

Բ. ՇՐՋԱՆ (1901 - 1902. ՅՈՒՆԻՍ) ԹԻՒ 7

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐՈՒՆ

«Համալսարան»ի Բ. վեցամսեան մտած ենք արդէն : Մեր տակաւին չվճարող բաժանորդները պէտք է գիտնան որ արդէն բաւական սպասած ենք, որպէսզի հաճին բաժանորդագրիննին վճարել : Շատեր մեզ կը դիմեն ու թերթ կ'ուզեն ստանալ, գիմելէ առաջ պէտք է մտածեն նաեւ որ «Համալսարան»ի բաժանորդագրինը ԿԱՆԽԻԿ է : Կան կարգ մը բաժանորդներ որոնց հետ պիտի գիտնանք խիստ վարուիլ :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիկոլիդիա. Գ. էֆ. Պաղտասարեան. — Կրնանք գոհացում տալ այն ատեն միայն երբ ուզուած շրջաններուն արժէքը կանխաւ մեզի փոխանցուի, ինչպէս նաեւ բաժնագրինները : Բաժանորդագրութիւնները չուտով գանձելնիդ եւ մեզ շրջակայիդ կը խնդրուի : Մանուցումը զրամը ստանալնուս :

Ճիպուքի. Պ. Գ. Արապեանց. — Ստացած ենք բայց գանձելու համար 55 սանգիմ ծախսելու ստիպուած ենք :

Թիֆլիզ. Արժ. Գիւլա Աւագ քէյ. Աղանեանց. — Ձեր քարտը ստացանք : «Լուծայ»ի թիւ Չը մեզ չէ հասած ու փոստը մերժողական պատասխան տուաւ : Կը խնդրենք ուշադրութիւն դարձնել «Համալսարան»ի հասցէին եւ միայն այն հասցէով մեզ գրել կամ որ եւ է յղում ընել :

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից :

Եւրոպայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 30 ֆրանք :

Հասցէն՝ Tiflis (Russie) Rédaction
du journal arménien Mschak

ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ

(Խմբագիր-հրատարակիչ Կ. Կրանսիլնիկեան)

Բաժանորդագրինը՝ արտասահմանում 12 ուրբլի :

Հասցէ՝ Tiflis (Russie). Rédaction de la Revue Mourtschak

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 8 ԵՒ 9րդ ԹԻԻԵՐԸ ՄԱՄԼՈՅ ՏԱԿ ԵՆ :



ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Ամէն ժողովուրդի մէջ ուսանողութիւնը կարեւոր եւ կենսական դերի մը կոչուած է: Ուսանողութեան մը անաշխին պարտականութիւնն է ուրեմն դիտակից ըլլալ այդ դերին եւ ջանադիր՝ իւրացնելու այն ամէն յատկութիւնները եւ կարողութիւնները զայն լիովին կատարել կարենալու համար: Աեկավար ըլլալ մտքին, հոգիին ու ձգտումներուն ժողովուրդի մը՝ ուսանողութեան ապագայ պաշտօնն է:

Քանի որ պատրաստութեան շրջանէ մը կ'անցնին ուսանողները՝ ապագայ մը թեւակոխելու համար, հարկ է որ անոնց ընծայուին այն ամէն դիւրութիւնները, որոնք պիտի նպաստեն անոնց բարոյական դաստիարակութեան եւ մտաւոր զարգացման: Ու այս կրկնակի կրթութիւնը ուղղակի յարաբերական արժէք մը ունի որքան ուսանողներու բնական ընդունակութիւններուն՝ այնքան անոնց կազմութեան շրջանի բարեկեցիկ վիճակին հետ: Որովհետեւ բաւական չէ ուսանող մը օժտել նիւթական լայն միջոցներով, ապահով պէտք է ըլլալ, միեւնոյն ատեն, անոր ինքնավարութեան կորովի մասին, որ զայն ազատ պիտի պահէ սոյթաքումի եւ բարոյական անկումի վտանգէն: Հոս է որ կ'արձանանայ հայրերու եւ պաշտպաններու անուշին վճռականութեան կարեւորութիւնը, ուսանողին ընտրութիւնը արգասաւոր ընելու համար: Որքա՛ն բարի հայրեր կորուստի ճամբան պեղած իրենց զաւակներու, որոնք մասնաւոր շնորհներով աւելցուն, ձեռնամուխ եղած են — գեղեցիկ ծրագրի մը, բայց միայն ծրագրի մը կապտիչ հրապուրանքին մէջ — գործի մը, որուն համար անհրաժեշտ են խէ՛ մտքի եւ թէ՛ մարմնոյ ծանօթ յատկութիւններ. առողջութիւն, բարոյական նկարագիր եւ սկզբնական զարգացում, ու այս երեք տարրերը միեւնոյն ժամանակ:

Բարձրագոյն կրթութիւն մը ստանալը կ'ենթադրէ կենսական ուժերու սպառում մը: Բաւական չէ ուսման համար անհրաժեշտ ծանօթութիւնները ամբարած ըլլալ ու

գիտնալ զեկաւարել ինքզինքը զմայլելի բարոյականով մը, հարկաւոր է ունենալ Ֆիզիքական առողջ կազմութիւն մը, ընդունակ տոկալու տքնաշան աշխատութիւններու եւ մասաւոր յոգնութեանց : Նմանապէս բաւական չէ առողջ ըլլալ ու միւս կողմէ զրկուած՝ բարոյականէ եւ մտաւոր ամէն զարգացումէ : Բոլոր այս պարագաները մասնանիչ ըրինք տըրամադիք հօր մը ինքնաբեր զոհողութիւններու կշիռը բարձրացնելու ապագայ տոկոսով մը : Չենք կրնար զանց ընել դարձեալ յիշատակել կազմական վաղընդփոյթ քայլքայումը շատ մը ուսանողներու, որոնց կը պակսէր միմիայն առողջութիւնը, կաշմբուռն կազմը, իրենց ուսման ծանրութեանց տանելու համար : Հայրերու հեռատեսութիւն թելադրող այս քանի մը ակնարկներէն յետոյ անցնինք առհասարակ մեր այն ուսանողներու վիճակին որոնք ցրուած են այս պահուս եւրոպական քաղաքներու մէջ :

Ուսանողներու նիւթական վիճակը, առհասարակ, խիստ ողբալի է : Փարիզ այսօր, բաղադատմամբ անցեալին, հայ ուսանողներու հոծ թիւ մը չի հաշուեր : Հակառակ այդ նուազումին շատ քիչեր են որ ունին այն ամէն նիւթական միջոցները որ անհրաժեշտ են իրենց ուսման : Միեւնոյն բանը կը նշմարուի նաեւ ուրիշ ուսանողական կեդրոններու մէջ, ինչպէս Մոնթէլիէ, Նանսի, եւ այլն : Յրանսայի մէջ, ընդհանրապէս, հայ ուսանողը բարեկեցիկ վիճակ մը չունի ու այդ ուսանողները, խիստ քիչ բացառութեամբ, ճանկանայեր են : Չափազանց հասկնալի է սակայն այս երեւոյթը, տաճկահայ ուսանողը չի կրնար այնքան դիւրութեամբ պաշտպան եւ պաշտպանութիւն գտնել ինչպէս ռուսահայ ուսանողը : Կովկասի հայերէն ոմանք մասնաւորապէս կրցած են հաշտեցնել իրենց լայն միջոցներուն հետ, շատ լայն սիրտ մը : Ու անա կը տեսնես բաղադատարար խիստ բարեկեցիկ ռուսահայ ուսանողներ Իերմանիոյ զանազան քաղաքներուն մէջ, Լայպցիկ, Պէսլէն, Միւնխէն, ու Չուիցերիոյ մէջ՝ Փընէվ, Լոզան, եւ այլն : Ուսանողներ՝ որ նուիրուած են աւելի իտէալական գիտութեանց, ընկերաբանութեան, փիլիսոփայութեան ու դպրութեանց, ուսանողներ՝ որոնցմէ ոչ նուազ թիւ մը ունի անյարմար տարիք մը ուսանողութեան, եթէ այս վերջինը իր բարձրագոյն սահմանին մէջ նկատենք : Ռուսահայ ուսանողին համար ուսանիլը յաճախ հաճոյքի

ու միմիայն ինքնազարգացումի խնդիր մըն է, ու անա
այն էական կէտը որով կը բացատրուի այն ազատութիւ-
նը ուսման, թէ ձեւի եւ թէ եղանակի մէջ, զոր կուտան
անոնք ինքզինքնուն։

Տաճկահայ ուսանողը սակայն միեւնոյն հանգամանք-
ներու մէջ չի դանուիր թէ, ինչպէս տեսանք, իր տրա-
մադրած միջոցներով եւ թէ ձգտումներով։ Նուիրում մը
ունի ան հողեւին դէպի իր ուսումը, որուն շրջանը կա-
նուխէն աւարտել իր միակ մտազբազումն է, զրկանքի
սաժանակիր բուէ մը օր առաջ ազատելու համար։ Հացի
խնդրով է որ այս վերջինը կը մտատանջուի միշտ, ու
ձեւուած, — բայց մեզ համար չափազանց էական եւ օգտա-
կար, — ուղղութիւն մը կուտայ իր ուսման՝ ասպարէզի մը
յաջողութիւնը կանխաւ ապահովելու համար։ Տաճկահայ ու-
սանողը կը նկրտի խելայեղօրէն, գրեթէ միշտ, վկայա-
դիր ձեռք բերելու ու կը հետեւի այն համալսարանական
ընթացքներուն որոնց պատրաստած ապագան անմիջական
նիւթական բարւոքում կը խոստանայ թեկնածուին։ Ու
անա պիտի հանդիպինք բժշկութեան, իրաւաբանութեան,
ճարտարապետութեան եւ ուրիշ ֆիզիքական գիտութիւն-
ներով զբաղող բազմաթիւ տաճկահայ ուսանողներու, ճիւ-
ղեր որ հազիւ թէ Եւրոպայի եւ մասնաւորապէս Ֆրանսայի
մէջ շօշափուած ըլլան ուսանողներէն։

Կը ծագի, այստեղ, սակայն հարց մը որ յաճախ մեր
մամուլին մէջ առիթ առած է վիճաբանութեանց. այդ է
տաճկահայ եւ ուսանող ուսանողներու ընկերական ձեռ-
տումներու հարցը, զոր մէնք կը զօդենք ուղղակի մեր
քիչ մը վերը ըրած տեսութեանց։

Իրեն դիրք մը ապահովելու հետամուտ տաճկահայ ու-
սանողը, բացի իր կարգ մը բաղձանքներու, — բաղձանք
զարգանալու, միտում բարձրագոյն կրթութեամբ մը փայ-
լելու, — գոհացում տալու մարմաջէն՝ կը մտատանջուի
զայն իրականացնելու դժուարութիւններովը։ Իր երիտա-
սարգ հասակին ան կը զգայ կեանքի անհաւասարութեան
բոլոր դառնութիւնը եւ կը դառնանայ։ Կը բաղխի բազ-
մագոյն խօչընդոտներու ու ամբողջ կեանքի վարդ շրջան
մը մարտիրոսացումով մը կը մկրտէ։ Ու որքա՞ն կը փոխ-
ւին հետզհետէ, այդ վայրկեանէն, անոր բնական կարողու-
թիւններու թռիչն ու ուղղութիւնը։ Ան կը դառնայ գործ-

նական մարդը, զոր կը մշակէ, յաճախ լաւագոյն կերպով իր կըթուեթեան շրջանին մէջ, ու ամէն գաղափար եւ միտք կը ստանայ իր որոշ սահմանը եւ կը տրուի իր ըմբռնումին մէջ իր սեպհական տեղը: Երբ արդէն աւարտած է իր գարգացումի ընթացքը ան պատրաստուած մարդ մըն է, կարող ու ընդունակ ինքզինքը ու իր ձգտումները առանց վարանելու եւ առանց այլեւայլի առաջնորդելու: Տաճկահայ ուսանողին ընկերական դիրքը, ուրեմն այն զլիսաւոր ազգակներէն մէկն է որ զայն կը հեռացնէ իր ուստահայ եղբայրակցէն ըմբռնումի եւ գործունէութեան տեսակէտով: Միւս կողմանէ այս վերջինը սնած անկախ շրջանի մը մէջ, եւ իր ուսանողութեան պահուն անհոգ ու ապահով, միշտ կը նկատէ կեանքը առանց փուշի ու փոշիի, ամէն բան վերացականութեան ու գաղափարականութեան գոյներով կը վերլուծէ ու այսպէս կ'ընդլայնէ իր կարգին այն անջրպեար, որով կը բաժնուի հայեացքով ու դատողութեամբ տաճկահայ ուսանողէն: Ահա այսպէս կը հաստատուի այն իրողութիւնը թէ մինչ տաճկահայ ուսանողը նրբամիտ է եւ քաղաքավար, հեռատես ու վերապահ, ուստահայ ուսանողը՝ ընդհակառակը՝ զգալապէս անվերապահ է եւ համարձակ, անխոհեմ բայց անկեղծ:

Ձգտումներու այս սակաւոր տարբերութիւնները պատճառ դարձած են որ նոյն իսկ ուսանողական շրջանին մէջ այս երկու որոշ պայմաններով ուսնացած տարբերը անհամաձայն գտնուին իրարու հետ. չհասկնան զիրար եւ զիրար չճանչնան: Ու, իրաւամբ, ուստահայ ուսանողը իրեն կը սեպհականացնէ ընկերական բոլոր խնդիրներու մէջ գիտակցութեան գերակշռութիւնը. չափազանց յետադիմական կը գտնէ ու պահպանողական՝ տաճկահայ ուսանողը, որ իր ամէն քայլին մէջ կը դնէ հաշիւ ու քննութիւն, ինչպէս նաեւ շրջահայեցութիւն: Տաճկահայ ուսանողը ժամանակայարմար կերպով բարեշրջութեան մը կը միտի, ու գեղեցիկ երազներու բարոյականը ապագային կը պահէ: Ուսում եւ ըմբոստացում ահա ուստահայ ուսանողին ձգտումը մէկ խօսքով, եւ խաղաղ ու կանոնաւոր բարեշրջում ահա տաճկահայ ուսանողին ըմբռնողութեան հիմնաքարը:

Բայց առնենք երկու ուսանողութիւնները գործի ասպարէզին մէջ, ուր կեանքը իր ընկճող բոլոր ուժը հաւաասարապէս կը տարածէ անոնց վրայ: Յուստիափութիւննե-

րու շղթայ մըն է որ կը քակուի ուստիայ ուսանողին համար: Օ՛, սիրուած իսէալներ, օ՛ պաշտուած գաղափարներ, որոնք բոլորն ալ մտացածին պատկերներ մնալու մատնուած են միայն, ու երբեք չեն ծառայեր իրական կեանքի զառնութեանց սփոփանքին ու կը մնան միայն հոգեկան մխիթարանք: Բայց տաճկահայ ուսանողը կը շարունակէ գրեթէ իր ուսանողական շրջանը, ուր իր ըմբռնումը չէ փոխուած, այլ գործունէութեան եւ աշխատութեան եղանակը: Եւ եթէ բարոյական անկումը տաճկահայ ուսանողութեան մէջ խաթարիչ գեր մը կը կատարէր այդ վտանգաւոր իրողութիւնը կը ներկայանայ ճիւղաձային անհողութեամբ մը ուստիայ ուսանողներու մէջ, կեանքի պայքարին սեամբ անոնց սուք դրած պահուն: Նիւթապաշտութիւնը, պահպանողականութիւնը այնքան զօրաւոր է յաճախ այս վերջիններու մէջ որ կը դերազանցէ ուսանողական անհող շրջանին ծայրայեղօրէն աղմկարար գաղափարականութիւնը:

Գալով այն խնդրոյն թէ ուսանող մը ունենալու է գործօն գեր իր ուսանելու պահուն ընկերական խնդիրներու մէջ:

Ունանք, մեր մէջ, ընկերաբաններ ըլլալու ինքնահամոզումով, ուսանողութեան դերը արդէն խիստ բարձր կը սահմանեն: Մեր մտաւորական եւ բանիմաց դասակարգը ճանչնալով զայն, այժմէն իսկ անոր կուտան պաշտօններ որոնք ուսանողական ըլլալէ կը գադրին բոլորովին, սակայն ուսանողական անուան սակ կը յայտնուին: Ընկերութեան մը բազմին վրայ վիճողները կամ զայն վճռողները ոչ թէ ուսանողութիւնները պէտք է ըլլան, այլ անոնց արտադրած ընտրեալ դէմքերը: Մեր մէջ, պիտի ստարկուի թէ, ուսանողները զժբազդաբար կոչուած են այդ գիրին. եթէ այդ գիտողութիւնը ստոյգ է բառի շուրջը չպտուտկենք եւ ուսանողութեան անունը չչաճագործենք: Ուրիշներ աւելի վերապահ, ուսանողներուն միայն գործ կը նշանակեն իրենց ուսումը. աւանձնացում եւ ճիգ մասնագիտութեան մը վկայագիրը ստանալու: Հոս ալ սակայն չափազանցութիւն մը կայ, միշտ նկատելով ուսանող մը իբր ընկերութեան մը ապագայ կարեւոր դէմքերէն մէկը:


օղտակար չէ՞ միթէ զայն ուղղակի յարաբերութեան դնել իր ընկերներուն հետ որ պիտի ըլլան իր ապագայ պաշտօնակիցները եւ որոնց հաւաքական գործունէութիւնը գերազանցապէս պիտի բաղդաւորէ ապագային, հնթակայ (*) ընկերութիւնը:

* * *

Փարիզի հայ ուսանողութիւնը իր քայքայուած Միութիւնը վերակազմելու ճիգեր կը թափէ վերջերս: Արդէն կազմած է իր գործադիր մարմինը որուն յանձնած է գործադրութիւնը վերջերս մշակուած ծրագրի մը, գրեթէ համաձայն մեր վերը յայտնած գաղափարներուն: Ուսանողներու իրարու հետ շփումը դիւրացնելով՝ գրական, գիտական եւ գեղարուեստական երեկոյթներով, դասախօսութիւններով, Փարիզի հայ ուսանողութիւնը իր ճշմարիտ զերին մէջ գտնուած կը լինի: Ամբողջական խտացում մըն է այդ՝ մեր երիտասարդ մտաւոր ուժերուն, որոնք հայ ժողովրդին ապագայ առաջնորդները պիտի հանդիսանան, թէ՛ մտաւորապէս եւ թէ՛ բարոյապէս: Ուսանողներէն ումանք ուրիշ աւելի լայն ձգտումներ կրնան ունենալ, ըսպասելով որ իրենց գաղափարները տարածուին, հարկ է անոնք եւս իրենց կարգին զօրաւիգ ըլլան այդքան զեղեցիկ նպատակի մը, որուն կը միտի Փարիզի հայ ուսանողներու գրեթէ ամբողջութիւնը:

Մեր ուսանողները մանաւանդ պէտք ունին մասնակցելու այդ տեսակ ուսանողական հաւաքումներու, ճանչնալու համար տաճկահայ երիտասարդ տարրին ճշմարիտ ձգտումներն ու ընդունակութիւնները, որոնք առաջին հպումով մը, իրենց գրեթէ բոլորին, խիստ (!) մարդկային չեն երեւիր:

Խոստովելով համերաշխութիւն չի գոյանար, տաճկահայ թէ՛ ուսանողներ զիրար հասկնալու պէտք ունին, եթէ իրաւամբ անկեղծ են եւ բարգաւաճիլ ու բարգաւաճել կ'ուզեն:



(*) Դիտել կուտանք որ ուսանողութեան մը բարոյական, մտաւորական եւ ընկերական կոչումը այլապէս կը մեկնուի երբ ան իր հայրենի երկրին մէջ կ'ուսանի, ինչ որ հայ ուսանողութեան պարզան չէ:

Չ Ե Ի Ա Շ Ր Ջ Ո Ի Մ

(Transformisme)

(Դասասխօսութիւն Փրօֆ. Ռէմի փէՌիէի, Փարիզի
Գիտութեանց Համալսարանէն)

Յ

Տեսակներու զաղափարին *ֆենադասուրիւնը*. Տեսակի հա-
նէլակը (problème). — Ինչպէս արդէն ըսինք, ձեւաշրջու-
մի վարդապետութիւնը կ'ենթադրէ տեսակներու բոլորո-
վին նոր ծանօթութիւն մը :

Տեսակներու զաղափարը վերջնականապէս կը յանգի
երկու օրէնքներու :

1. Միեւնոյն զոյգէն սերած բոլոր անհատները իրա-
րու կը նմանին անհատական մօտաւոր յատկանիշներով,
որոնք զուգաւորութեամբ կը չէզոքանան հետզհետէ :

2. Զուգաւորութիւնները միեւնոյն տեսակի պատկա-
նող անհատներու մէջ միայն բեղմնաւոր կրնան ըլլալ :

Այս երկու օրէնքները բացարձակ են : Բնդհակառակը
կը բացատրեն պարզապէս խիստ յաճախ կատարուած
իւրօրութիւններ, առանց ներկայացնելու ընդհանուր ար-
մատական յատկանիշ մը : Ահա ասոնք են այն հարցերը
որոնց մէջ կը բովանդակուի տեսակի հանելուկը :

Տեսակի զանազանութիւն (variété). ցեղ. — Տեսակաբար
խումբերը մեզ կրնան ներկայանալ երկու տարբեր որպի-
սութիւններով. կարգ մը տեսակներ գրեթէ սերտիւ համա-
նման անհատներու հաւաքածոյներ են, որոնք անհատա-
կան շատ չնչին արարներութիւններ միայն կը ներկայա-
ցնեն : Այլ տեսակները մեծամասնութիւն մը կը կազմեն :
Ուրիշ նուազ համատարր տեսակներ ալ պոյութիւն ունին,
որոնց մէջ անհատական զանազանութիւնները բաղձաթիւ եւ
տարածուած են : Եթէ այս զանազանութիւններէն մէկ քանին
յաճախականութիւն մը ցոյց տան, սակայ գոնուին կարգ

մը պայմաններու տակ կամ միջաւայրերու մէջ, այն ատին, այս մասնաւորութիւնները ներկայացնող անհասաները կ'ամփոփուին միեւնոյն զանազանութեան (variété) մէջ:

Վերջապէս միեւնոյն զանազանութեան (variété) պատկանող անհասաներու միջեւ եղած զուգաւորութիւնները անոր սեպակաւն յատկանիչները ժառանգական կը դարձնեն, ինչ որ ցեղի (race) մը գոյութեան սուրիթ կուտայ: Յեղերը կը բնան կազմուիլ, կամ ուղղակի կլիմայի եւ ուրիշ պատճառներու ազդեցութեան տակ, կամ, մարդուն միջնորդութեամբ, արտագրող կենդանիներու ընտրութեան մէջ: Մէկ խօսքով գոյութիւն ունին ընտրուած ցեղեր, ինչպէս մարդկային ցեղերը, եւ արուեստական ցեղեր, օրինակ մեր ընտանի կենդանիներու ցեղերը: Այս վերջին պարագային ցեղերու կազմութեան մեքենականութիւնը դիւրին է հասկընալ: Ան կը կատարուի միմիայն բանաւոր կերպով ընտրուած անհասաներու զուգաւորութեամբ: Արգարեւ անասնաբոյժը կրնայ ընտանի կենդանիներու մէջ այս ինչ կամ այն ինչ յատկութիւնները մասնաւորապէս զարգացնել, օրինակ ձիուն մէջ արագընթացութիւնը կամ քալելու ուժը: Ասոր համար զանազան ձիերու մէջ նա կ'ընտրէ անոնք՝ որոնց անհատական յատկանիչները լաւագոյն կերպով կ'իբրականացնեն իր փափաքը. նա զանոնք կը զուգաւորէ ու ժառանգականութեան շնորհիւ ուղղուած յատկութիւնը կ'աճի յառաջացած ծնունդներու մէջ: Յայտնի է որ նմանօրինակ ընտրութիւն մը շարունակելով կարգ մը սերունդներու մէջ՝ կարելի կ'ըլլայ ստեղծել մասնաւոր ցեղ մը որ ուղղուած աշխատութեան պատշաճ կը լինի: Անասնաբոյժներու այս ընտրութիւնը վաղուց բնորոշուած է ընտրողութիւն (sélection) անունով:

Այսպէս առաջնորդուած զուգաւորութիւններ պատահական զուգաւորութեանց բոլորովին հակոտակը ըլլալով, տարբեր արգիւնք մը յառաջ կը բերեն. այս վերջինները ընդհանրապէս ազատ բնութեան մէջ կը կատարուին ամրացնելով տեսակը, մինչդեռ առաջինները զայն կը փոփոխեն, որոշ ցեղերու կը բաժնեն, որոնց ամէն մէկը ունի իր մասնաւոր յատկանիչները: Այս ցեղերու իւրաքանչիւրին կարելի է դարձեալ տալ տեսակի սահմանը, այսպէս խօսելով ցեղը տեսակ մըն է տեսակին մէջ: Այն յատկանիչները որ կը զանազանեն միեւնոյն տեսակին պատկանող ցեղերը

միեւնոյն կարգէն են՝ ինչպէս այն յատկանիշները որ կը բաժնեն երկու մերձաւոր տեսակներ . ուրիշ խօսքով, երբ իրարմէ՝ անկարեւոր յատկանիշներով՝ տարբերող երկու անհատական հաւաքածոյներու առջեւ կը գտնուինք, կարելի է որոշել յատկանիշները միայն քննելով, թէ արդեօք անոնք երկու դրացի տեսակներ են կամ միեւնոյն տեսակին պատկանող երկու ցեղեր :

Չաւանակն ցեղերու եւ տեսակներու մեջ զուգաւորում . — Խառնաստեակի եւ Խառնացեղի . — Դրացի միեւնոյն տեսակի պատկանող կենդանիներ չեն զուգաւորիր, իսկ միեւնոյն տեսակի պատկանող ցեղեր կրնան զուգաւորուիլ եւ արտադրել, ծնունդը կը կոչուի խառնացեղ (métis) . խառնացեղերը առանց ընտրութեան կրնան զուգաւորուիլ թէ իրարու եւ թէ իրենց ծնունդ առող երկու ցեղերու պատկանող անհատներու հետ : Բայց այս ընդհանուր օրէնք մը չէ, որովհետեւ բազմաթիւ բացառութիւններ չեն պակսիր :

1. Երկու դրացի տեսակներ շատ անգամ կը զուգաւորին եւ ծնունդ ալ կուտան, առանց արտադրութիւնը կը կոչուի խառնաստեակ (hybrides), օրինակ իշու եւ մատակ ձիու զուգաւորութիւնէն առաջ եկած ջորին . մատակ իշուն եւ ձիուն արտադրած պարսօն (bardot) : Բոյսերու մէջ խառնատեսակութիւնը յաճախ կը կատարուի նոր ձեւեր ըստ տեղծելու համար :

Բայց կարեւոր է ըսել թէ խառնատեսակները ընդհանրապէս անծնունդ կը մնան, կամ բացառիկ պարագաներու մէջ միայն կ'արտադրեն : Սակայն եւ այնպէս հոս ալ բացարձակ սահման մը չենք կրնար գծել : Խառնացեղեր կան որոնց մէջ, կանոնաւոր բեղմնաւորումով, շատ մը սերունդներ կ'արտադրուին . օրինակ շանը եւ դայլին զուգաւորումէն յառաջ եկած ծնունդները կրնան մինչեւ չուս սերունդ արտադրել . շնագայլին եւ շանը ծնունդները մինչեւ երեք սերունդ :

Վերջապէս ուրիշ կենդանիներու մէջ ալ բեղմնաւորում մը սահման չունի : Մեր կողմերու ընտանի եղջ չորրորդակ դարաշրջանի մը մէջ կը ներկայանար չորս որոշ տիպարներով, որոնք իրարմէ բոլորովին բաժնուած՝ իւրաքանչիւրը տեսակ մը կը ներկայացնէր, բայց յետոյ Հնդկաստանի ուրիշ տեսակ ձեւերու հետ զուգաւորելով զանազան ընտանի ցեղեր առաջ կուգան, որոնք հետեւադար իսկա-

կան խառնատեսակը կը կազմեն : Միեւնոյն բանն է նաեւ մեր շուներուն եւ ձիերուն համար :

Ուրիմն խառնատեսակներու բեղմնաւորութեան տեսակէտով ամէն կարելի տեսակներ կրնան յառաջ գալ :

2. Միեւնոյն աստիճանաւորումը կը նշմարուի միեւնոյն տեսակի պատկանող կարգ մը ցեղերու զուգաւորումներու մէջ : Ընդհանրապէս խառնացեղերը միշտ բեղմնաւոր են , հոս ալ՝ բացառութիւնները պակաս չեն : Ցեղեր կան որոնց մէջ բեղմնաւորումը շատ սահմանափակ է , ուրիշներ ալ կան որ չեն զուգաւորուիր : Փարակուայի կատուն մեր կատուներու հետ ծնունդ չի տար՝ թէեւ անոնցմէ սերած է . նոյնպէս Հնդկաստանի խողը Պրազելիայի հնդկխողին հետ չի զուգաւորուիր , թէեւ ան այս վերջինը իրեն իբր նախնիք ունենայ :

3. Նոյն իսկ անսահման կերպով բեղմնաւոր խառնատեսակներու մէջ՝ բաւական սերունդներ վերջ եկող ծնունդները՝ երկու դրացի տեսակներէն միուն բոլոր յատկութիւնները կ'իւրացնեն . այս իրողութիւնը կը կոչուի նախնական տիպարի վերադարձի երեւոյթ : Միեւնոյն երեւոյթը կը նկատուի նաեւ խառնացեղերու մէջ . արդարեւ եթէ խառնացեղերը իրարու հետ զուգաւորուին՝ կարգ մը սերունդներէ վերջ եկող ծնունդները կը վերադառնան իրական ցեղերուն , եւ կենդանաբոյծները՝ խառնածին ցեղերը պահելու համար ստիպուած են յարմար ընտրողութեամբ մը այս վերադարձի ձգտումը արգելել :

Համառօտելով այս ուսումնասիրութիւնէն կրնանք հետեցնել թէ ցեղի եւ տեսակի ծանօթութիւնները իրարու հետ կը ձուլուին : Միեւնոյն ծնողքէ սերած անհատները իրարմէ բաժնուելով եւ երկու հեռաւոր երկիրներ փոխադրուելով՝ ծնունդ կուտան երկու անհատներու հաւաքածոյներու որոնց յատկութիւնները իրարմէ այն աստիճան կը տարբերին , որ յետոյ իրենց համազգիներու հետ զուգաւորութեամբ պտուղ չեն տար : Պիտի ըսենք թէ ասոնք երկու ցեղեր են , որովհետեւ իրենց ընդհանուր ծագումը գիտենք , բայց այս ընդհանուր ծագումէն դուրս , զոր առասարակ ստուգելը անկարելի է , տեսակի սահմանը , առնելով իր ամենայն ճշտութեամբ , մեզ կը ստիպէ զանոնք նկատել իբր տարբեր տեսակներ :

Արդ որ եւ է արգելք չկայ տեսակները իբր ցեղեր

նկատել, որ յաջորդաբար մասնաւոր յատկութիւններ ունենալով՝ իրենց համատոհմերէն բաժնուած են :

Ուրեմն՝ ձեւաչըջումի վարդապետութեան հիմնական սկզբունքը — տեսակներու կարելի փոփոխումը — ոչ մէկ կերպով հակասական չէ տեսակին իսկական դադափարին հետ : Աւելի յառաջ երթալով, կրնանք ապացուցանել թէ ձեւաչըջումը միայն վանելով միանգամ ընդմիջա տեսակներու կազմութեան տեսութիւնը, մեզ կրնայ տեսակներու ծագման մասին ըմբռնելի բացատրութիւն մը տալ : Այս ապացուցումը, որ գիտական տեսութիւններու մեծ մասին իբր փորձ գործածուած է, կատարուած պիտի ըլլայ եթէ հաստատենք թէ ձեւաչըջման վարդապետութիւնը առանձինն կը համաձայնի գիտուած իրողութիւններու մեծամասնութեան հետ :

Արդ այս իրողութիւնները կը մնան երեք որոշ կարգերու մէջ, որ կրնան յարիլ կամ բազդատական անդամազննութեան, կամ հնէաբանութեան եւ կամ սաղմնաբանութեան :

Ձեւաչըջման անդամազննական ապացոյցներ . — Ա. երբ խումբի մը պատկանող զանազան կենդանիները բազդատական կերպով քննենք, կը հաստատենք թէ՛ ամէնուն մէջ ալ կազմակերպութեան ընդհանուր ծրագիրը միեւնոյնն է : Ամէն սեղ միեւնոյն գործարանները միեւնոյն առընչական գիրքին մէջ կը գտնուին եւ միեւնոյն մասերէն կազմուած են : Քիւլիէ որոշ կերպով կը նկատէ ընդհանուր ծրագրի այս նոյնութիւնը, բայց մասնաւորապէս Ժօֆուա Սէն-Իլէո կը լուսաբանէ զայն եւ իր յօրինուած ֆի ծրարագրի ձևաբանը տեսութեան մեկնակէտը կ'ընէ :

Ողնայարաւորները, որ իրենց գործարանային բարձր կազմութեամբ, իրենց կենցաղավարութեամբ ու բնաւորութիւններով իրարմէ չափազանց կը տարբերին, սակայն եւ այնպէս յօրինուածքի միեւնոյն ընդհանուր ծրագիրը ունին : Գործարանները կրնան զարգանալ կամ տկարանալ եւ նոյն իսկ աներեւութանալ : Կրնան նոյն իսկ իրենց պաշտօնները փոխել եւ բոլորովին հակառակ պաշտօններ առնել, սակայն ընդհանուր ծրագիրը չի խախտիր, եւ զանազան մասերը նոյնապէս զետեղուած կը մնան : Այսպէս ուրեմն միեւնոյն խումբի պատկանող անհուն զանազանութիւններու մէջ բան մը միայն իր դրութիւնը մշտական

կերպով կը պահէ, այն է գործարաններու իրարու հետ ունեցած յարաբերական դիրքը, եւ կամ պարզ ըստով գործարաններու յարակցութիւնը (connexion) . գործարան մը, ըսած է Ժօֆոուա Աէն-Թ'իլէո, կը վաւթարի, կը տկարանայ, կ'ոչնչանայ բայց իր դիրքը չի փոխեր: Այս սկզբունքը, որ կը կոչուի յարակցութեան սկզբունք (principe des connexions), բազմաթիւ անդամազննութեան հիմը կը կազմէ: Կազմութեան այս ծրագրի միութիւնը պարզ եւ բացայայտ կերպով կը մեկնուի ձեւաչափումի վարդապետութեամբ:

Եթէ միեւնոյն խումբի պատկանող զանազան տեսակները իրարմէ կ'ածանցին, արդարեւ շատ պարզ է որ, հակառակ իրենց կրած զանազանութեան, ժառանգականութեան ազդեցութիւնը միշտ զգալի պիտի ըլլայ ամբարցնելով իր էական մասերու մէջ յօրինուած քի ընդհանուր ծրագիրը, որ հետեւաբար համանման պիտի գտնուի իրարմէ յառաջացած բոլոր ձեւերու մէջ:

Բ. Կենցաղավարութեան փոփոխութեամբ՝ կարգ մը գործարաններ անօդուտ դառնալով կը տկարանան եւ վերջնականապէս կ'աներեւութանան: Բայց այս յետաչափումը անմիջական կերպով չի կատարուիր: Բոլորովին աներեւութանալէ առաջ՝ այս գործարանները հետզհետէ կը տկարանան, կը պզտիկանան եւ կենդանիին անպէտք կը դառնան ու վերջ ի վերջոյ բոլորովին կ'աներեւութանան: Արդարեւ նախասարակակն գործարաններու գոյութիւնը յաճախ կը տեսնուի կենդանական աշխարհի մէջ: Յառաջ բերենք մէկ քանի խիստ ծանօթ օրինակներ:

Խոզի իւրաքանչիւր սոսքը չորս մատ ունի . բայց աստոնցմէ երկուքը միայն գետինը կը շօշափեն, իսկ միւս երկուքը անոր չեն հասնիր, եւ բնականաբար բանի մը չեն ծառայեր, սակայն եւ այնպէս անոնք կատարեալ են: Նման կարգաւորում մը կը գտնուի շատ մը որոճացողներու մէջ, անոնք ալ չորս կատարեալ մատներ ունին, որոնցմէ երկուքը շատ աւելի ետ մնացած են եւ գետնին չեն հասնիր . բայց հոս օրինակը շատ շօշափելի է . յայտնի կերպով ցոյց կուտայ կողմնական երկու մատներու ձգտումը դէպի անհետացում, որովհետեւ եթէ որոճացողներու շարքին հետեւինք՝ յետաչափման (régression) բոլոր շրջանները կը գտնենք մինչեւ կատարեալ աներեւութացում:

Ձիուն իւրաքանչիւր ոտքը մէկ մատ միայն ունի . բայց վերնոտնի (métacarpe) ետեւի կողմը կը գտնենք երկու երկար ու նրբաձիգ ոսկորներ՝ կպած այս վերջինին որ երբեմն նոյն իսկ անոթ հետ միազօղուած է . ասոնք կը ներկայացնեն երկու աներեւութացած մատերու համապատասխանող կողմնական երկու վերնոտնայիններու նախադերը :

Կարգ մը մողէսներ կը կրեն նախատարրական անօդուտ թաթեր , աներեւութանալու վիճակի մէջ , տեղափոխութեան համար բաւական է մարմնոյն ալիքներուն ծածանումները եւ կողերու շարժումները : Կուրօձերու (orvet) անդամներու անհետացումը կատարեալ է . բայց տակաւին անոնց կմախքներու մնացորդները մարմնոյն մէջ գոյութիւն ունին : Պօաներու մէջ կունկի հետքերը միայն գոյութիւն ունին , որոնք մկաններու մէջ կորսուած են : Վերջապէս օձերու մեծ մասին մէջ՝ անդամներու գոյութիւնը յիշեցնող բոլոր հետքերը վերջնականապէս աներեւութացած են :

Նմանօրինակ գործարանային հետքերու գոյութիւնը՝ ձեւաշրջումի վարդապետութեան ամէնէն բացայայտ ապացոյցներէն մէկն է : Նա էակներու բարեշրջման անհրաժեշտ հետեւութիւն մըն է :

Գ. Վերջապէս բնութեան մէջ , միջնական ձեւերու գոյութիւնը , որ միեւնոյն խումբի հեռաւոր տեսակները իրարու կը կպէ , բացայայտ լրացում մըն է մեր պաշտպանած տեսութեան : Գիշ մը առաջ տրուած քանի մը օրինակներուն կրնանք աւելցնել ուրիշներ ալ , օրինակ իսկական կրիաներու անցքի ծառայող անկատար պատեանով կրիաները , եւն : Այս միջնական ձեւերու գոյութիւնը դիւրաւ կը բացատրուի . անոնք կը ներկայացնեն կենդանական ձեւերու կրած բարեշրջման միջոցները :

Բայց հոս առարկութիւն մը կը լինի մեզ . ինչո՞ւ համար այլ եւս գոյութիւն չունին այս միջնական ձեւերը : Ի՞նչպէս կ'ըլլայ որ անջատ տեսակներ գոյութիւն կ'ունենան իրարմէ բոլորովին անկախ : Կը կարծուի թէ բնութիւնը մեզ ներկայացուցած ըլլայ յաջորդական ձեւերու շարք մը , որ անզգալապէս իրարու կը շղթայուին :

Միջնական ձեւերու աներեւութացումը դիւրաւ կը բացատրուի . քիչ վերջը ցոյց պիտի տանք թէ ինչպէս

անոնք՝ նուազ ընդունակ ըլլալով քան վերջնական ձեւերը , ջնջուած են բնական ընտրողութեամբ , պահելով միայն վերջնական ձեւերը :

Երբեմն այսինչ միջնական բոլոր ձեւերը աներեւութացած են , այնպէս որ ազգաբնական շարքի վերջնական ձեւերը միայն գոյութիւն ունին եւ բնութեան մէջ բոլորովին առանձնացած են : Օրինակ , ձիուն նախնի ձեւերը բոլորովին անհետացած են եւ ձիուն ցեղը , այսօր , ոչ մէկ մտաւոր ազգական չունի : Ընդհակառակը կրնայ պատահիլ , եւ այս սովորական պարագայ մըն է , որ իրարմէ յառաջ եկած ձեւերու շարքի մը մէջ յապաւումներ միայն տեղի ունենան , եւ թէ բազմաթիւ միջնական ձեւեր յարատեւեն , թոյլ տալով բազդատական անդամազննութեամբ վերակազմել յիշեալ շարքին աստիճանաւոր բարեշրջումը եւ կամ աւելի պարզ ըսելով , անոր ազգաբանական ծառը (arbre généalogique) :

Հնէաբանական ապացոյցներ. — Ա. կենդանական ձեւերը եթէ իրարմէ յառաջ կուզան յաջորդաբար ձեւաշրջումով , եւ եթէ միջնական ձեւերը հետզհետէ ջնջուած են բնական ընտրողութեամբ , անոնց կմախքները պէտք էր անոնց գոյութիւնը յայտնէին , կմախքներ՝ որ կրնային գտնուիլ բրածոյութեամբ (fossilisation) : Արգարեւ երկրաբանական զանազան խաւերու մէջ կը յայտնուին կենդանիներու մընացորդներ : Այս բրածոյներու քննութեամբ կրնանք գտնել աներեւութացած միջնական կենդանիներու բարեշրջման ընթացքը :

Ինչ ինչ տեղերու մէջ , ուր երկրաբանական շարքերու մակադրութիւնը կանոնաւոր կերպով եղած է , ուր բրածոյները մասնաւորապէս առատ են , կրնանք յաջող կերպով հետեւիլ ձեւերու յաջորդութեան՝ եւ իրենց ազգաբանական ծառը կազմել առանց ընդմիջման :

Բայց այս պարագաները շատ քացառիկ են : Արգարեւ մէկ կողմանէ կատարուելու համար , բրածոյութիւնը կը պահանջէ մասնաւոր պայմաններ՝ որոնք հազուադէպ պարագաներու մէջ միայն իրականացած են իրենց ամբողջութեամբ , այնպէս որ շատ մը կենդանիներու մնացորդները բոլորովին անհետացած են : Միւս կողմանէ տիպարի մը բարեշրջումը ընդհանրապէս կը կատարուի շատ սահմանափակ միջավայրի մը մէջ , ուրիկց յառաջացած ձեւերը կը տա-

րածուին մերձաւոր շրջանակներու մէջ: Ուրեմն վերջին աստիճան դժուար է գտնել եւ ուսումնասիրել կազմութեան այն ճիշտ կէտը՝ ուր բրածոյութիւնը շարունակաբար եւ ամբողջապէս իրկանացած է: Հնէաբանութիւնը, առհասարակ, բարեշրջման կարգ մը վիճակներ կամ նոյն իսկ երբեմն միայն առանձնացած միջնական ձեւեր մեզ կը ներկայացնէ, որոնք անբաւական ըլլալով հանդերձ՝ մեզ թանկագին տեղեկութիւններ կուտան: Մոզոսթրոն բրածոյ կենդանին (archæopteryx) սողուններու եւ թռչուններու միջեւ անցքի որոշ տիպար մըն է եւ կաւճային շրջանի (époque crétacée) ասամուսուր թռչունները՝ այս վերջին խումբին բարեշրջման երկրորդ շրջանը կը ներկայացնեն: Նոյնպէս կարգ մը ուղղաթափ եւ տարբերատամ սողուններ (thériodontes) յայտնի կերպով կ'առաջնորդեն զէպի ստնաւորները:

Բ. Եթէ երկրիս վրայ իրարու յաջորդող զանազան ձեւերը քննենք կը հաստատենք թէ կենդանիները զանազան ժամանակներու մէջ շատ մեծ փոփոխութիւններ կրած են: Մէկ քանի ձեւեր դարերու ընթացքին մէջ իրենց գոյութիւնը պահած են (նախակենդանիք, ծովաստեղք, եւ այլն), որովհետեւ անոնք միշտ գտած են գոյութեան այն պայմանները, որոնցմով կեանքի պայքարէն զերծ մնացած են: Բայց ուրիշ շատ մը ձեւեր երկրաբանական որոշ շրջաններու մէջ միայն կը գտնուին, որոնք իրենց ապրած շրջանին սկիզբները ծագում առած՝ եւ վերջերը անհետացած են: Եռաբլթակները (trilobites) յատուկ են նախնական գետիններուն (terrains primaires), ամոնեղջիւրները (ammonites), նետախեցիները (bélemnites), եւ ասամուսուր թռչունները միմիայն երկրորդական գետիններուն կը պատկանին: Վերջապէս շատ մը ստնաւորներ երրորդ շրջանին կը պատկանին:

Գ. Կենդանեաց ձեւերը դիպուածով չէ որ կը յաջորդեն իրարու. անոնց չարքը ցոյց կուտայ կազմուածքի աստիճանաբար կատարելագործութիւն մը: Գալով ողնայարաւորներուն, օրինակ ձուկերը, կ'երեւին սկզբնական շրջանին մէջտեղերը. գորտազգիները եւ սողունները, թռչունները ժիւրայական ժամանակին եւ, վերջապէս, ստնաւորները երկրորդակ շրջանին մէջ միայն, հասնելով երրորդակ շրջանին՝ իրենց կատարեալ զարգացման:

Այս անընդհատ յառաջդիմութիւնը կեանքի մշտական պայքարի ազդեցութեան բնական հետեւանքն է, որ կը դարգացնէ անհատական նկարագիրները եւ յաջորդաբար կը կատարելագործէ կազմուածքները:

Սաղննաբանական ապացոյցք . — Ամէն կենդանի էակ ձուէ մը, պարզ բջիջէ մը կը սկսի, որ բաժնուելով ծընունդ կուտայ բազմաբջիջ սաղմի մը. այս վերջինն ալ յաջորդաբար կը կնճոտաի հասուն կենդանին առաջ բերելու համար: Ուրիշ կերպ խօսելով, կենդանին՝ ձուէն սկսելով, յաջորդաբար կարգ մը վիճակներէ կ'անցնի, որոնք կը կոչուին սաղննային ձեւեր, եւ որոնց յաջորդութիւնը կը կազմէ սաղննային զարգացում, կամ աւելի պարզ, սաղննածնութիւն կամ էմբրիոնաբան (embryogénie ou ontogénie): Մէկ կողմէ արուած կենդանիի մը սաղմնային ձեւերու շարքը քննելով՝ միւս կողմէ, քննուած միեւնոյն կենդանիին խումբին պատկանող, հասուն կենդանիներու ձեւերը դատաւորելով, իրենց յարաձուռն կնճատութեան եւ փոփոխութեանը կարգով, կը տեսնենք որ սաղմնային յաջորդական ձեւերը յաճախ յառաջ կը բերեն ձեւաբանական (morphologique) կարգերէն, կարգ մը ձեւեր: Ուրիշ խօսքով սաղմնածնական եւ ձեւաբանական երկու շարքերը զուգընթաց են:

Գորտին բարգաւաճումը մեզի դեղեցիկ օրինակ մըն է 1. գորտի ձագը (têtard) որ ձուէն դուրս կ'ելլէ ճշմարիտ ձուկ մըն է: ունի երկար պոչ մը եւ երկ-խոռոչ սիրտ մը. վզին երկու կողմերէն կը բացուին խոկային ճեղքեր, որոնք բերանը դուրսին հետ հաղորդակցութեան կը դնեն: Անոնց իւրաքանչիւրին առջեւի կողմը կը գտնուի ճիւղաւորուած երկար մանրաթելեր (filament), ասոնք կը կոչուին արտաքին խոկաներ (branchies externes), որ ժամանակի մը համար միայն շնչատութեան կը ծառայեն: 2. Երկրորդ չրջանի մը մէջ, արտաքին խոկաները կը ծածկուին մութային խփանով մը: 3. Աւելի վերջը, խփանը բոլորովին կցուելով մարմնոյն մակերեւոյթին վրայ, խոկաները միանգամ ընդմիջտ կ'անհետութանան, եւ քոֆերը միայն, որ արդէն վաղուց կազմուած էին, կը գործեն. միեւնոյն ժամանակ չորս անդամները կը կազմուին: 4. Վերջապէս վերջին կերպարանափոխութեամբ մը պոչը կ'աներեւութանայ եւ գորտը արդէն իր վերջնական վիճակը կը ստանայ:

Արդ դորտազգիներու դասակարգը տիպարներ կը պարունակէ, որոնք հասուն վիճակի մէջ կ'իրականացնեն բոլոր այս վիճակները : 1. Յայտնախոյկներ (pérennibranches) որոնց խոփկները արտաքին կողմէն են, 2. Գաղտնախոյկներ, (cryptobranches) որոնց խոփկները ներքին կողմէն են, 3. Սալամանդրներ (salamandrines) որ պոչաւոր են, բայց թոքով միայն շնչառութիւն կը կատարեն : Չեւաչրջումի վարդապետութիւնը ասկից կը հետեւցնէ թէ գորտը նախնական ձեւեր ունեցած է, որոնք եթէ այժմ գոյութիւն ունեցած ըլլային մեր համրած զանազան խումբերու մէջ պիտի դասաւորուէին, իսկ իրենց վերջնական ձեւը ձուկերն են, որոնցմէ ծագում առած են :

Իսկապէս այս փոփոխութիւնները կարելի է բացատրել ոչ թէ երբեմնի ձեւերը յիշատակելով, այլ կենցաղավարական փոփոխութիւններուն հաւասարակշռու անհրաժեշտութեամբ որ կը կրէ դորտը իր զարգացման ընթացքին մէջ : Այս կարծիքը ոչ մէկ կերպով սպաւնացուած չէ, որովհետեւ բազմաթիւ օրինակներ ցոյց կուտան որ շնչառութեան կերպի փոփոխութիւնը բացարձակապէս կապուած չէ սաղմի կեանքի եղանակին փոփոխութիւններուն :

Այսպէս ցամաքային սալմանտը չ'երթար միշտ ջուրին մէջ ձգել իր ձուկն, որ մօրը մարմնոյն մէջ կը զարգանայ, սակայն սաղմերը տակաւին արտաքին խոփկներ կը պարունակեն եւ կրնան ջուրին մէջ ապրիլ երբ զանոնք պարունակող կեղեւը կտարեն արուեստական կերպով ձուկն դուրս հանեն . հոս խոփկները ըստ դիպաց կը ծառայեն միայն՝ եւ կերպարանափոխութիւնը բոլորովին կենցաղավարութեան փոփոխութեան մը հետեւանքը չէ :

Կարգ մը մացառագորտեր (rainette) երբեք ջուրը չեն մանար, սակայն չերեփիկներու մօտ խոփկները կ'երեւին ձուկն սէջ թէեւ երբեք շնչառութեան չեն ծառայեր . անոնք հոս կը ներկայանան միայն նախնիքներու մէջ իրականացած վիճակը յիշելու համար :

Այսպէս է նաեւ օդասուն ողնայարաւորներու համար, որոնք բնաւ ջրային կեանք մը ունեցած չըլլալով մէկտեղ սաղմային վիճակի մէջ կը ներկայացնեն խոփկային ձեղքեր, որ յետոյ կը գոցուին առանց բանի մը ծառայելու : Հոս հարեւանցի տեսութեամբ մը միայն ցոյց տուինք այն իրողութիւնները, որոնք ձեւաչրջման վարդապետութեան

իբր անհերքելի ապացոյց կը ծառայեն: Տակաւին կարող էինք հրեշտարանութիւնէն (teratologie) եւ կենդանեաց աշխարհագրական բաժանումներէն բազմաթիւ օրինակներ բերել, բայց արդէն յիշուած օրինակները բաւական են մեր պաշտպանած վարդապետութիւնը հաստատելու համար:

Տեսակներու զանազանեան պատճառները. — Այսօր եթէ ձեւաշրջումի անսովորութիւնը կարող բնապատումներէ առհասարակ ընդունուած է եւ եթէ տեսակներու սերունդը նոյն իսկ վերջնականապէս հաստատուած է, ընդհակառակը, տեսակներու զանազանութիւնները յառաջ բերող սատարներու ինչպէս նաեւ անոնց յարատեւ բարեշրջման պատճառներու մասին տակաւին շատ հեռու են որոշ համաձայնութեան մը յանգելէ:

Այս տեսակէտով յաջորդաբար շատ մը անսովորութիւններ եղած են, ու բոլորն ալ ընդհանրապէս, առաւել կամ նուազ մեծ ճշմարտութիւններ կը պարունակեն:

Ս. ԵՐԿԱՆԵԱՆ

ԳԵՐ. 3. ԱՐՍԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՏՆԵԱՆ

Հայ մտաւորական հորիզոնը հետզհետէ կ'ամայանայ: Հայր Աւետիք Վ. Ալիշանէն վերջ Հ. Արսէն Վ. Այտնեանն է որ կը բաժնուի միանգամ ընդ միշտ այդ հորիզոնէն այս տարուայ Յուլիս 21ին: Ծնած էր 1825 Յունուար 7ին Բերայի մէջ: Վիեննայի Միսիթարեաններու իբր Աբրահայր, իր խելացի տնօրինութիւններով ոչ միայն կազմեց, կազմակերպեց եւ բարձրացուց համանուն միաբանութիւնը այլ եւ դաստիարակը եւ հայրը եղաւ շատ մը կարեւոր դէմքերու զորս արտադրած է յիշեալ Միաբանութիւնը: Իր շատ մը աշխատութիւններու մէջ գլուխ գործոցը կազմողը մեր աշխարհաբար լեզուի «Քրիստոսական Քրիստոսութիւն»ն է, որուն մէջ երկու ճիգ անձնաւորած է, մէկ կողմէն աշխարհաբար լեզուին տիրապետութեան իրաւունքը պաշտպանելով՝ անոր գրաբանեան ախոյեաններու դէմ, միւս կողմէ մանրամասն գիտական քննութեամբ անոր կանոնները ճշգրտով կազապարած է զայն վերջնական ու անժխտելի կերպով:

Եղած է ո՛չ միայն ձեռնհաս վարիչ մը, խորաթափանց միտք մը ու գիտնական մը, այլ եւ պարտաճանաչ դէմք մը դէպի իր նմանները, դէպի իր ազգը: Յարգա՛նք իր անուան, յարգա՛նք իր յիշատակին: ԽՄԲ.

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տես Հարևարտան, էջ 213 թիւ 7)

29. Կանրախի դարմանումը բերեկնիի եռաքեանք. — Բանի մը տարիներէ ի վեր կարմրախառ (scarlatine) գանազան երկիրներու մէջ դարմանել սկսած են բերեկնիի եռաքեանք (essence de térébenthine), անով մորթին տակ ներարկումներ ընելով: Որովհետեւ այդ ներարկումները չափազանց ցաւ կը պատճառէին, եւ միշտ ուռոյցներու առիթ կուտային, Կրաց քաղաքի նշանաւոր բժիշկներէն մէկը սկսաւ ներքնապէս կիրարկել սոյն դեղը՝ կարմրախտաւորներու վրայ՝ կաթի միջոցաւ, օրական մէկ կամ երկու անգամ 15էն 20 կաթիլ: Ցարդ քիչ գործածուած այդ դեղը, 100 կարմրախտաւորի վրայ փորձուելով, խիստ զօրաւոր ցոյց կուտար իր ներդրութիւնը եւ մասնաւորապէս երկկամային (rénal) կիսճոտութեանց առջեւը կ'առնէր: Ճիշդ ժամանակին գործածուելով, հասնւ սը թերեպայմրինը (բերեկնիի էութիւն) նոյն իսկ կարող է արգիլելու, գրեթէ անվրիպելի կերպով, երիկամնասապի մը (néphrite) յառաջացումը, միեւնոյն ատեն հազուադիւրս դարձնելով սպիսաւիզումը (albuminurie): Դիտելի է որ, միւս կողմէ, այդ էութեան գործածութիւնը 1867էն ի վեր ծանօթ էր Հէլսնկֆոնցի բժշկի մը:

30. Ուղեղին կշիռը մարդուն եւ կնոջ մօտ. — Մահուան պատճառը մեծապէս կը ներգործէ ուղեղին կշռոյն վրայ: Սուր հիւանդութեանց մէջ՝ մասնաւորապէս ճիֆթերին կ'աւելցնէ ուղեղին կշիռը: Տարիքի տեսակէտով 1էն 7 օրուան նորածինին ուղեղը միջին կերպով 371 կրամ է մանչերուն՝ եւ 161 կր. աղջիկներուն մօտ: Առաջին տարուան վերջը փոխազարձ կշիռները 967 եւ 893 կրամ են:

Երրորդ տարուան վերջը ուղեղին ծանրութիւնը երեք անգամ կ'աւելնայ, ու ան կ'աճի դանդաղ կերպով մահուանդ աղջիկներուն մօտ: Կը թուի հասնիլ իր ծանրութեան դազաթնակէտին 19-20 տարիին մարդուն եւ 16-18 տարիին կնոջ մօտ: Արու չափահասի մը ուղեղին միջին կշիռն է 1400 կրամ եւ կնկանը 1275 կրամ: Ծերութեան հետեւանքով ուղեղին կշռոյն տկարացումը մարդուն մօտ կը սկսի դէպի 80 տարին եւ կնոջ մօտ դէպի 70 տարին:

Այս առթիւ կ'արժէ յիշել որ ամենէ ծանր կշռուած ուղեղներէն մէկը եղած է ուսս գրագէտ Թուրկէնիէֆինը , որ 2120 կրամ ծանրութիւն ունէր եւ ամենէ թեթիւ կշռողներէն մէկը կամպէթայինը , որ հազիւ 1160 կրամի կը հասնէր :

31. Ոգելից ընկերները , անոնց եռաբիւնները եւ վսակ-գաւոր բաղադրիչները . — Պ. Լապորտ , Փարիզի Բժշկական ակադեմիայի մէջ կը կարգայ տեղեկագիր մը պատասխանելով Երեսփոխանական Ժողովոյ ընդառաջ գրած ալքօլի վերաբերեալ մէկ հարցին : Տեղեկատուն կը քննէ ախորժակը ըմպելիներու (appéritif) հասաններու (էութիւն) վտանգաւորութիւնը եւ կ'ապացուցանէ թէ արդի օրէնսդրական մարմինը բաւականապէս զօրաւոր է անոնց գործածութիւնը նուազեցնելու համար :

Էսանաները ծայրայեղ թունաւորիչ բնոյթ ունին : Անիսօնի էութիւնը (essence d'anisette) խիստ հարուստ է սիանհիտրիկ թթուով (acide cyanhydrique) , բաւ է քիչ մը զօրեղ կերպով շնչել՝ զայն պարունակող շիշէ մը , լուրջ մարուկ մը ունենալու եւ քանի մը օր հիւանդանալու համար : Եւրոպոսը նմանապէս տասներեք թունաւոր գոյացութիւններ կը պարունակէ , ինչպէս նաեւ վիշնեթերը (vulnéraire) որ տասնըութ թունաւոր բաղադրիչներ ունի : Ու այդ յիշուած ըմպելիներու թունաւորութիւնը խիստ կը զօրանայ երբ մանաւանդ անոնց բաղադրիչները ոչ թէ բոյսերէ ալ ըմբիական միջոցներով պատրաստուի , ինչ որ յաճախ կը պատահի :

Ապսկերին եւ անիգերին հետ կարելի է յիշել նաեւ ժընիկվոք (գիհի) իբր խիստ թունաւոր ըմպելի : Աւեռ (լեղի) կոչուած օղիները նմանապէս թունաւոր են : Կրնան յտուաջ բերել զանազան ջղային եւ գործարանաւորական կազմալուծումներ :

Ու տեղեկատուն կ'առաջարկէ բացարձակապէս արգիլել վաճառումը եւ գործածումը յիշուած գոյացութիւններու եւ թոյլ տալ միայն զանոնք բժշկութեան մէջ՝ իբր դեղ :

32. Չեփուած ընկերները եւ միքրոպները . — Փրանսայի Հանրային Կործոց նախարարութիւնը վերջերս արգիլեց հոմ ուտուելիք ընդեղէններու եւ պտուղներու (սալատ , բողկ , եւ այլն) մշակումները այն հողերու մէջ , որոնք կ'ընդունին կոյուղիներու ջուրը : Այս արգիլքը սակայն՝ կը սահմանաւորէ միայն այն վտանգը որ հողին

մէջ աճող ընդեղէնները կը սպառնային, որովհետեւ պէտք չէ բնաւ կարծել որ այդպէսով չարիքը բոլորովին ջնջուած է: Դարձեալ այդ արգելքէն զերծ են քունարը եւ արքիշօն (էնկիւնար) որ հողէն քիչ մը բարձր կը բուսին, ու բնականաբար զեռ պիտի մշակուին վերոյիշեալ հողերուն մէջ:

Գերմանացի միքրոպարան մը կ'ուզէ իմանալ թէ ի՞նչ կ'ըլլան թոքախտի այն պատիւները, որոնք կոյուղիներու մէջ կը թափուին: Հոն կը խեղճուին կամ չնչահեղձ կը լինին: Բնա՛ւ: Կ'ապրին այնտեղ, ընդհակառակը, ու կը բարգաւաճին աւելի լաւ քան օդին եւ առուակի ջրին մէջ: Մինչ վազուն ջրի մէջ թոքախտի միքրոպներու ժահաւորութիւնը երեք ամիսէն աւելի չի տեսեր, միեւնոյն միքրոպները խառնուելով կոյուղիի ջրին՝ տասնըութը ամիս վերջ այնքան ժահաւոր (virulent) են՝ որքան առաջին օրը: Միեւնոյն գիտնականը կը գիտէ որ յիշուած պատիւները մշակուած հողին մէջ եւս չեն անհետանար եւ կը կը պահեն միշտ իրենց վարակիչ յատկութիւնները:

Վիւրձ եւ Պուրժ, ֆրանսացի գիտնականները, իրենց փորձերը աւելի հեռուները մղած են, հասկնալ ուզած են թէ արդեօք պատիւներ չեն գտնուիր այն բողկերուն մէջ, որոնք թոքախտի պատիւներ պարունակող հողերու մէջ աճած են: Այսպէս ամաններու մէջ բողկ, սալատ, եւ այլն մշակելէ վերջ, զանոնք կը սնուցանեն թոքախտի սերմ պարունակող կոյուղիի ջրով. ժամանակ մը վերջը, երբ բոյսերը կ'աճին, անոնց տերեւներէն կտրելով կը ներարկեն հնդկախոզերու վրայ, 60 առ 100 արգիւնքը հաստատողական եղած է, այսինքն թոքախտի սերմերը հողէն, որուն մէջ թաղուած էին, անցած էին բողկին, սալատին տերեւներուն մէջ:

Ուրեմն զգուշանալու է այդ պայմաններու մէջ ձեռք բերուած ընդեղէններ ուտելէ:

33. Հակափոստադիստիկ փոստադիստիկները Փասքոնի հետիոտնի մեջ. — 1901 տարւոյն մէջ 1321 անձեր են թարկուած են այդ գործողութեան որոնց 8ը մեռած են կատաղութենէն. բայց որովհետեւ այս վերջիններէն երեքին մէջ կատաղութիւնը յայտնուած է դարմանումը վերջանալէն առաջ, պէտք չէ զանոնք հաշուել վիճակագրութեան մէջ, որ կրնայ այն ատեն հետեւեալ կերպով հաստատուիլ.

Դարմանի ենթարկուած	1318
Մեռած	5
Մահ առ 100	0.38

վերջին տասը տարիներուն մէջ, մահացիութիւնը հետեւեալն եղած է. դարեանի

տարի	ենթարկուած	մեռած	մահ առ 100
1891	1,550	4	0,25
1892	1,790	4	0,22
1893	1,048	6	0,36
1894	1,379	7	0,50
1895	1,520	5	0,33
1896	1,308	4	0,30
1897	1,521	6	0,39
1898	1,465	3	0,20
1899	1,614	4	0,25
1900	1,420	4	0,28
1901	1,321	5	0,38

34. Ժակեսիսը 1901 թուականին . — Պ պ. փրուստ եւ Ֆէլլըր բժշկական ակադեմիային ներկայացուցած են տեղեւոր մը՝ ժանտախտային հիւանդութիւններու մասին 1901 թուականին, ուրկէ կը քաղենք հետեւեալը .


Ինչպէս 1900ին՝ ժանտախտը վարակած է միեւնոյն ուժգնութեամբ աշխարհի հինգ մասերուն մէջ : Առանց լքանելու ոչ մէկը իր գլխաւոր վառարաններէն, յայտնուած է նաեւ նոր տեղերու մէջ, ուր կարգ մը կէտերու վրայ ճիւղաւորած ալ է : Ընդհանուր առմամբ ժանտախտը 1901ին ունեցած է կայուն վիճակ մը, առանց նշանակելի տարածման մը ձգտում ցոյց տալու եւ ոչ ալ տկարանալու : Հետեւեալը եղած է անոր աշխարհագրական բաժանումը .

Ասիա . — Հնդկաստան, Պոմպէյ, Բիւրաջ, Միզոր, Մատրաս, Կալկաթա, Փէնճապ, Բաշմիր . — Հնդկաչին — Փըրաք եւ Սինկափուր . — Սիամ. Թոնկաք . — Չինաստան. Հոնկ-Քոնկ, Մաքաո, Ամուայ, Գանթոն, Ֆու-Չէու, Նիքու-Չուանկ, Շան-Հէ-Քօան . — Ճաբոն . — Ֆոռմոզ . — Ֆիլիպինաք. Մանիլա . — Պարսկաստան. Չախթան . — Ասիական Թուրքիա. Պատրա, Պաղտատ, Իզմիր եւ Սամսոն :

Այրիկի . — Եգիպտոս . Աղեքսանդրիա, Չալազիկ, Մինթէ, Մանսուրա, Փորթ-Սաիա, Միթ-Կանիր, Պընա-իւ-Ասալ, Չիֆթաճ, Թանթաճ . — Մոզանպիք. Մակիւտ, եւն .

Աւերկա . — Սան-Ֆրանչիսկո, Ռիօ-Նանէյրօ, Բամբոս, Թիւքիւման, Սան-Նիքոլա-տը-Լօս-Արօյիտ, Պիւէնո-Այրէս : Ռիկիանիա . — Բէէնալանս, Սիանէյ, Փերթ, Նումէա, Հաուայի կղզիներ :

Եւրոպա . — Ռուսիա. Աստրախան, Օտէսա, Պաթուժ . — Եւրոպական Թուրքիա . Կ. Պոլիս . — Իտալիա. Նափոլի . — Փորթուգալ. Փորթօ . — Անգղիա. Հիւլ, Բարաիֆ եւ Լիլիփուլ :



Խ Ռ Ո Վ Ք Ը

«Մուրճ» (Թիւ 5 Մայիս, էջ 210). — Խրատած էինք «Մուրճ»ը որ պատմական խնդիրներու վիճաբանութեանց մէջ նախատինքը փաստի տեղ գործածելու սխալը չերկրորդէ, որովհետեւ լուրջ ամսագրի մը անվայել էր քարենկէցութեան առիթներ որոնելը: Այդ պատմական խնդիրը Հայ Եկեղեցականութեան «նոր մտքերի եւ ուղղութիւնների անհաշտ թշնամի» ըլլալու մառախլապատ թեզն էր զոր գրած էր եւ կը պաշտպանէր «Մուրճ»ի պարբերական հրատարակութեանց քննադատ խմբագիրը, առանց այլեւայլի միեւնոյն ատեն եւ պարզամտօրէն հայ կղերականութիւնը ներկայացնելով իբր «կաստա» մը: Թէ որքան կաղ էին «Մուրճ»ի այդ խմբագրին համոզումները — մեր կարծիքները խեղաթիւրելու իրենց բռնագրօսիկ ճիգովը սնգուրուած — զայդ կարող է հասկնալ ընթերցողն իսկ՝ եթէ վերստին ուշադրութեամբ աչքէ անցնէ այդ խնդրոյ վերաբերեալ մեր հրատարակած յօդուածը (Հաւնաշարան, Թիւ 5-6, էջ 184), որ իր փաստացիութեամբ եւ վիճաբանուած նիւթին վրայ ցոյց տուած անկողմնակալ եւ անկանխակալ ոգիովը այնքան խոռվիչ եւ ցնորեցուցիչ լախտի հարուած մը իջուցած է յիշեալ խմբագիր պարոնի գլխին: Ու սթափած, անամօթ յանդգնութիւնը կ'ունենայ ան, վերստին բանալ «Համալսարան»ի դէմ, «Մուրճ»ի Ծրդ համարի մէջ, իր կեղտոտ ու անպատկառ հայնոյանքներու տոպրակը: «Մուրճ»ի կրիսիկոս խմբագիրը (այբպէս կ'անուանենք, չչփոթելու զայն թիֆլիզեան հատափոր ամսագրի հաւաքականութեան հետ) իր այդ հրաշալի պատասխանին մէջ, ինչպէս միշտ, դարձեալ կցկտուր բառեր ընդօրինակած մեր վերջին յօդուածէն, — առանց, բնականաբար, զայն ամբողջովին հասկցած ըլլալու արժանիքն իսկ ունենալու, — կը յայտարարէ թէ մեր «գատուղութիւնները վայրենի» են, այնքան վայրենի՝ որ չէ կրցած անոնց թափանցել նրբամիտ եւ էնտէլիգէնտ պարոնին համայնագէտ միտքը, ու այդ պատճառով է, անտարա կոյս, որ հայնոյանքներու աղբով լեցուցած է իր գրպան

ները, որով պիտի դիւրացնէր իր փախուստը՝ ցանկելով զանոնք աջ ու ձախ. ու այսպէս ապացուցած պիտի ըլլար « Գրիգոր Արծրունուց սող մը անգամ չկարդացած » ըլլալնիս, առանց այդ սիրուած ու յարգուած հրապարակագրի գրութիւններէն մի սող իսկ առաջ բերելու, երբ մենք կ'ըսէինք թէ « Գրիգոր Արծրունին յառաջդիմութեան պայքարը ոչ թէ եկեղեցականութեան դէմ մղեց, այլ պահպանողականութեան, որուն ներկայացուցիչները աշխարհականներ էին եւ են »: Ինչո՞ւ չընդունիր կրօնիկոս պարոնը որ յետադիմական եւ յառաջդիմական աշխարհական կուսակցութիւնները ունէին հաւասարապէս իրենց մէջ եկեղեցականներ. ու եթէ կ'ընդունի ինչո՞ւ սխալը ճանչնալու պարզերես խոստովանութիւնը կը դանդաղի ընելու:

Չմոռնալով միշտ որ յիշեալ « կրօնիկոսը » Թաքոս մըն է (ինչպէս պիտի ըսէր Րաֆֆի) . . . շարունակենք: Երբ մենք կ'արգահատէինք այդ պարոնի նոյն իսկ իր բերնով արտասանած խօսքերու հասողութեան մասին իր ունեցած ագիտութեանը վրայ եւ կ'ուզէինք զինքը գիտակցութեան եւ գիտակից վիճաբանութեան հրաւիրել, հեղինակով թէ ի՞նչ հասկցել կ'ուզէր « նոր մտքերի եւ ուղղութիւնների » բացատրութիւններով, նա փոխանակ իր ճապաղ միտքը լուսաբանելու (ա՛խր, ի՞նչպէս), մեզի կ'անուանարկէ յետադիմական, եւ այլն անականներով:

« Խորենացու ողբը, Ղազար Փարբեցու թուղթը « օրուան գաղափարներ » չեն եւ սակայն « Համալսարանը » պիտի կարմրէ, եթէ նայէ այդ կրակոտ բողոքներին, որոնք ուղղուած են կղերական անշարժութեան, հնամուտութեան եւ կարճամտութեան դէմ: » Կատարեա՛լ: Ահա՛, վերջապէս « նոր մտքերի եւ ուղղութիւնների անհաշտ թշնամի » ըսելով ինչ հասկցնել կ'ուզէ մեր Թաքոսը, թէև այդ խօսքը կ'արտասանէ ան՝ պատասխանելու համար մեր մէկ միջանկեալ խօսքին թէ « անցեալ պատմութիւնը օրուան գաղափարներով չէ որ կը գատուի: » Հայ եկեղեցականութիւնը ուրիմն անճարակ է եղած եւ ոչ թէ թշնամի նոր մտքերու. հայ եկեղեցականութիւնը ուրիմն փոխանակ ինքը անճամբ « նոր մտքերին եւ ուղղութիւններին » տարածու-

լու՝ միշտ իր հնամուտութեան մէջ թաղուած մնացած է, ապագան չէ նախատեսած՝ կարծամիտ է եղած: Եթէ այս է ամէնը « անհաշտ թշնամութեան » խնդիրը կը ջախջախուի ընդ միշտ եւ կը մնայ կղերը շարժունութեան մէջ դնելու խնդիրը որ եկեղեցին դպրոցին հետ աւելի սերտօրէն կապէ ու զարկ տայ մեր ցեղային յառաջգիտական գործին: Բայց ո՞վ ատոնց հակառակը բողոքած է... կը հարցնենք: Ինչո՞ւ վրդոված խմբագիր-պարոնը պաղարխնուքիւնը չէ ունեցած ուշի-ուշով վերստին կարգալու այն յօդուածը, որ առիթ տուած էր իրեն՝ իր նախադարձակ եւ անիմաստ ձախըտուածքները զետեղելու « Մուրճ » ի փետրվարի եւ յետագայ համարներու մէջ, քանի որ սոյն յօդուածով մենք մատնանիչ ըրած ենք աւելի պերճախօսօրէն եւ աւելի փափուկ օտարականով մը մեր եկեղեցականներու անշարժութիւնը. « Մենք կը հաստատենք որ մեր ժողովուրդը, այսօր, միեւնոյն հոգեկան պահանջներուն հետ՝ միեւնոյն մտաւորական պէտքերը չունի այլեւս: Քաղաքակրթութիւնը մուտք գտած է արդէն անոր մէջ, նոր ուղղութիւն մը տալով անոր մտաւորական պէտքերուն: Մեր կղերին կը մնայ, ուրեմն, ներկայանալու այսուհետեւ, իր վարչական պաշտօնին մէջ, բաղձացուած ձեռնհասութեամբ եւ ազատագրուած ակզբունքներով: ... Կղերին անկ է ուրեմն ներկայանալ մտքի առկուծ կարողութիւններով ու ժամանակաշարմար ձիրքերով: » Իսկ ինչ որ մեր կղերին հնամուտութեան եւ կարծամտութեան կը վերաբերի գրած ենք՝ խօսելով Վեհափառ Հայրապետին վրայ, « Թէ իր լուսամիտ տնօրինութիւններուն շնորհիւ, որոնք անտարակոյս չպիտի ուշանան, մեր կղերին բարոյականն ու մտաւորը ազնուացընելու համար, ամէն ճիգ չպիտի խնայուի: . . եւ այլն: » (տես, Համալսարան թիւ 2, Բ. Շրջան):

Ո՞ւր է ուրեմն այն ծանրաճանաչութիւնը եւ գիտութիւնը յիշեալ « կրիտիկոս » խմբագրին, որոնք իրեն մոռնուող մը ըրած, կը յանդգնի վճռել ամէն մի ծանր հարց, ամէն մի երեւոյթ:

Ու մենք այսքանը բաւական կը համարենք, վերստին կրկնելով մեր խրատը թէ՛ եթէ բաղձալի է տեսնել « Մուրճ » ը իբր լուրջ գրական ամսագիր մը՝ հարկ է խոստափիլ զայն

խեղաթիւրումներու, հայհոյանքներու եւ տղայամիտ քըն-
նադատականներու տոպրակ դարձնելէ: Եթէ «Համալսարան»ը
չողոքորթել գիտնար, այսօր այսքան կծու տողերով չէր
կարգի կոչեր, երկրորդ անգամն ըլլալով, «Մուրճ»ի
պարբերական հրատարակութեանց բաժնի «կրիտիկոս»ը:
Մեր անկախ ոգին եւ անկաշկանդ դատողութիւնները կրնան
սակայն ստեղծել մեզի դէմ երեւակայելի եւ աներեւակայելի
թշնամիներ. բայց մենք կը նայինք անոնց արհամարհող
աչքով մը՝ երբ չարամտութիւնն ու եսասիրութիւնը զա-
նոնք կը խռովէ. կը նայինք անոնց արգահատանքով եւ
լեցուն գուժով՝ երբ անոնք պարզամտօրէն եւ տղայամտօ-
րէն իրենց զարգացումէն խիստ բարձր վճիռներ արձակե-
լու երազներով կը գինովնան:

Հարցը մեզ համար փակուած համարելէ առաջ, կը նե-
տենք «Մուրճ»ի խռոված «կրիտիկոս»ի երեսին այն
տողերը զոր նա սպազրել կուտար այդ հանդէսի ճրդ թիւին
237 էջին վրայ, սինիք ու կեղծաւոր շտաշասանութեանք
մը, ուրիշի մը դէմ իր ըրած մէկ քննադատութեան մէջ.
«Եթէ կամենում էք, որ ձեզ հետ հնարաւոր լինի որ եւ է
հարցի մասին խօսելու, բանակոխ մղելու՝ եղէ՛ք շիտակ,
լաւ հասկացէ՛ք ձեր կարդացածը, եղէ՛ք վայելուչ եւ օրի-
նաւոր: . . . Մենք այլեւս ոչ մի ցանկութիւն չունենք
խօսելու այս առիթով «Մուրճ»ի այդ անօնիմ խմբագրի
հետ»:

Օգտուիլ գիտցէ՛ք, ձեր արտասանած այդ գեղեցիկ
խօսքերէն, «կրիտիկոս»-պարոն, եթէ զանոնք գոց սորված
ջե՛ք միայն:

Թ Ե Ր Թ Օ Ն Ի Փ Ո Ւ Ա Ր Է Ն

Վ Ա Խ Ը

(ՀՈԳԵ-ԲԵԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՅՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

(Փրօֆ. Թ. ՄՕՍՕ՝ Թուրէնի համալսարանէն)

Հեղինակին յառաջարանք

IV

Կարծեմ թէ Տարուին չափազանց կարեւորութիւն տուած է կամքին՝ իբր պատճառ արտայայտութեանց։ Մենք, երիտասարդ բնախօսներս, այսպէս խօսելու համար, աւելի մեքենականութեան կը յարինք. աւելի մանրամասնօրէն կը սորվինք, կ'ուսումնասիրենք գործարաններու մեքենականութիւնները եւ կը ջանանք փնտռել նոյն իսկ գործարաններու կազմուածքին մէջ անոնց գործունէութեանց բացատրութիւնը։

Անա՛ օրինակ մը թէ ես ինչպէ՞ս կը մեկնեմ քանի մը երեւոյթներ, դրութիւն մը՝ որ Տարուինէն կը տարբերի։ Գիտենք որ ճագարները շատ երկչոտ են եւ ուրիշ ո եւ է կենդանի ոչ այնքան դիւրու կը կարմրի կամ կը տժգունի։

Այս կենդանիներուն, ինչպէս նաեւ շատ մը մարդոց քով յուզումներէ եւ հոգեկան տպաւորութիւններէ գոյացած արեան շրջանի փոփոխութիւնները աւելի լաւ կը նշմարուին ականջներուն վրայ՝ քան գէմքին։

Վերին Իսաւրիոյ բնակչութեան մէջ մէկը միւսը կըշտամբելու համար « անոր գլուխը պիտի լուայ, ականջները կարմրցնելու աստիճան։ » Ճագարին ականջակոնքին մէջտեղ կը գտնուի շնչերակ մը՝ որ խարխալէն դէպի գագաթ կը մեկնի, կը ճիւղաւորի եւ իր վրայ կը ծռի դէպի եզերքը եւ կը կազմէ երկու ճիւղ։ 1854 թուականին Մօրիս Շիֆ դիակց որ այս շնչերակը փոխն ի փոխ կծկումի եւ ընդլայնումի շարժումներ կը ներկայացնէ որոնք սրտի շարժումներուն չեն համապատասխաներ։

Ճագարին ականջը լոյսին դիտելով, կը տեսնենք որ երբեմն երբեմն շնչերակին արամադիծը այնքան կը նուազի

որ հազիւ թէ անոր գոյութիւնը կ'ընդհնմարուի: Քիչ յետոյ կը մեծնայ, նորէն կ'ուռի եւ իր բոլոր ճիւղերը կ'ընդլայնին, այնպէս որ ականջը բոլորովին կարմիր դոյն մը կը ստանայ եւ աւելի կը տաքնայ: Այս վիճակը քանի մը երկվայրկեաններ կը տեւէ. յետոյ շնչերակն եւ իր ճիւղիկները կը փոքրանան եւ հեազհեաէ կարմրութիւնն ալ կը ջնջուի: Մ. Շիֆ այս շնչերակը կոչեց երկրորդական սիրտ (cœur accessoire), որովհետեւ այնպէս կը կարծէր թէ այս շնչերակին ընդլայնումները եւ կծկումները ականջին համար էին, ինչ որ էր սիրտը ամբողջ մարմնոյն համար, այսինքն անոնք ականջին մէջ արեան շրջանին կը նպաստէին:

Կրկնեցի Շիֆի փորձերը, ձեռք առնելով կարգ մը զգուշութիւններ՝ որոնք ուրիշ ո եւ է պարագայի մէջ անօգուտ եւ անկարեւոր կրնային նկատուիլ:

Նախ եւ առաջ կենդանին ձեռքերուս մէջ բռնելէ ըզգուշացայ, որպէս զի յուզումներու ենթակայ չըլլայ: Յետոյ այնպէս մը կարգադրեցի որ կրնայի կենդանիին ականջները դիտել: Ատոր համար վանդակ մը շինել տուի որ կատարելապէս կը գոցէր պատուհանի մը բացուածքը, այնպէս որ ճագարը չէր կրնար տեսնել այն վայրը, ուր ես կը գտնուէի եւ ուրկից ծակի մը միջոցով ուզածիս պէս կրնայի տեսնել վանդակը՝ առանց նշմարուելու կենդանիէն:

Այս փոքրիկ վարպետութեան շնորհիւ կրնայի ճագարները դիտել հանդարտօրէն եւ ուսումնասիրել, առանց զիրենք վրդովելու, եւ չէին իսկ կրնար կասկածիլ թէ մէկը գաղտագողի գիրենք կը դիտէ:

Առաջին անգամ անակնկալ մը եղաւ ինձ համար երբ տեսայ թէ իրենց ականջները բնաւ կարմիր չէին, ինչպէս որ կը պատահէր՝ երբ սեղանին վրայ ձեռքիս մէջ բռնած պահուս յուզումի ենթակայ էին: Ականջին արեան խողովակներու ընդլայնման եւ կծկման արագ շարժումները, այս կենդանիին երկչոտութեան յատկանշական տժգունութիւնը եւ կարմրութիւնը վայրկեանապէս դադրած էին: Ականջին շնչերակը ուռած կրնար մնալ երկար տոնն, երբեմն ժամերով ականջը կասկարմիր: Ասի կը պատահէր մասնաւորաբար երբ կենդանին խորին հանգստութեան մը մէջ թաղուած էր: Բացարձակ անդորրութեան վիճակը ուրեմն միշտ երակներու ընդլայնումով մը չընկերանար: Ճագարներուն, ինչպէս նաեւ մարդոց ականջները հաւասարապէս

գունատ եւ կարմիր չեն միեւնոյն ժամանակ եւ միեւնոյն պարագաներուն մէջ, օրինակի համար երիտասարդները աւելի դիւրութեամբ կը կարմրին քան տարիքոտները: Շատ անգամ հայրը, մայրը եւ ձագուկները դիտելով, կը տեսնէի որ վերջիններու ակունջները շատ կարմիր էին եւ երթալով կը գունատէին, որքան որ անայլայլ կը մնային: Տարիքոտ մարդոց ակունջներն ալ գունատ են: Վերջապէս միեւնոյն ընտանիքի երիտասարդ անդամներուն մէջ ալ տարբերութիւն կարելի է տեսնել:

Շուկան կ'ընտրէի այն ճագարները որոնք չափէն աւելի կը կարմրէին եւ շատ ալ դիւրութեամբ: Երբ մարդ ուշի ուշով դիտէ եւ ուսումնասիրէ թէ ի՞նչպէս բացարձակապէս անգործ վիճակի մէջ գտնուող ճագարի մը ակունջները կը տփգունին, պիտի տեսնէ անշուշտ թէ այս փոփոխութիւնը պարտի արտաքին պատճառի մը: Կենդանին հանդարտօրէն կը շնչէ ու իր ակունջները կարմիր են. բայց անա շնչառութեան կանոնաւորութիւնը կը խանգարի, կենդանին դլուխը վեր կը բարձրացնէ, շուրջը ակնարկ մը կը նետէ, կը հոտոտէ, երակները կը կծկին եւ ակունջները կը տփգունին: Մի քանի վայրկեան վերջ, ականջը դարձեալ կարմրագոյն է. բայց իւրաքանչիւր նոր աղմուկ ելլելուն, ականջը կը գունատի: Սուլիչի ձայն մը, աղաղակ մը, ո՛ր եւ է աղմուկ մը, շան հաչիւնը, յանկարծ ծակէ մը վանդակին մէջ մտնող ճառագայթ մը, թռչունի արագընթաց թռիչը բաւական են առաջ բերելու համար վայրկեանական դեղնութիւն մը, որուն կը յաջորդէ արտասովոր կարմրութիւն մը: Այս պարագաներուն մէջ, կրնանք պնդել թէ ականջին մէջ արեան շրջանը կը յայտնէ կենդանիին հոգեկան վիճակը: Կենդանիին մէջը կամ շուրջը դարձածներէն արեան շնչերակները կ'ազդուին եւ զանոնք կ'արտայայտեն:

Սյուպէսով Մ. Շիֆի դիտողութիւնը կը հաստատուի փորձով. բայց այս դործողութեան բացատրութիւնը զոր կուտամ, Շիֆինէն կը տարբերի, երակներու ընդլայնումը եւ կծկումը կարելի չէ բաղդատել երկրորդական սրտի մը շարժումներուն հետ: Ճագարներուն ականջի գունատութեան եւ կարմրութեան յար եւ նման են մարդուն երեսին գունատութիւնը կամ կարմրութիւնը: Գիտուններէ ոմանք կ'ուզէին մարդկային զէմքի այս փոփոխութեանց տարբեր մեկնութիւն մը սալ եւ ես պատիւ ունեցայ հաստատելու:

Թէ սոյն երեւոյթը կը տեսնուի նաեւ գրեթէ ամէն կենդանիներու քով :

Պիտի տեսնենք որ այս երեւոյթը տեղի կ'ունենայ նաեւ աքաղաղին կատարին , հնդկահաւերու վզին մսակներուն վրայ : Կրնանք դիտել տալ նաեւ որ մարդիկ եւ շուները միայն դէմքով չեն կարմիր , այլ նաեւ ոտքերով :

Այս կենդանիներուն մօտ կը կարծուէր թէ սոյն երեւոյթը գոյութիւն չունէր , որովհետեւ մաշկին երակները ծածկուած էին մազերով , փետուրով կամ թեփով եւ կը կարծէին թէ միայն մարդը կարմրելու առանձնաշնորհումն ունի . ճագարներու փորձը կը ցուցնէ որ այդպէս չէ :

Այս փոփոխութեանց այնքան ընտանեացած էի որ բաւական էր փոքրիկ ծակէ մը դիտէի եւ եթէ կենդանիին քթին ծայրը քիչ մը տեսնէի , կրնայի պնդել թէ ականջները կարմիր են թէ՛ գունաւոր . որովհետեւ ամէնէն թեթեւ յուզումը անգամ շնչառութեան կանոնաւորութիւնը կը խանգարէր , ինչպէս նաեւ ուրնուրնքի շարժումները եւ զայս կարելի է փորձել նոյն իսկ մարդուն վրայ :

V

Կարելի ոմանց անհաճոյ պիտի թուի թէ մարդոց եւ կենդանիներու մէջ յատկանշական տարբերութիւններ չկան եւ ջանացած ենք հաստատել թէ մեր դէմքին փոփոխութիւնը որ այնքան ազնիւ , այնքան գեղեցիկ եւ այնքան մարդկային կը գտնենք , ամբողջ կենդանական աշխարհին համար հասարակ երեւոյթ մըն է : Բայց զմեզ կը մխիթարենք այն գաղափարով թէ ճշմարտութեան հանդէպ բանաստեղծութիւնը , հիացումը , ներշնչումն ու զգացումները առնական եւ նոր ձեւի մը տակ կը ծնին . ճշմարտութեան խուզարկութիւնը մասնաւոր հաճոյք մը կը ներշնչէ , կը գեղազարդէ եւ կ'ազնուացնէ մարդկային իմացականութիւնը եւ վստահ ենք թէ դիտական յոռաջգիմութիւնները զգացումները խեղաթիւրելու բնաւ կարութիւն եւ յատկութիւն ալ չունին :

Այժմ որ փորձառական դրութիւնը իշխող է , բնախօսը պարտի համեստ ըլլալ , գրագէտին եւ արուեստագէտին աջակցիլ , մշակուած եւ զարգացած մարդոց հետ խորհրդակցիլ , որպէս զի գիտութեան ամէնաթարթական եւ էական սկզբունքները տարածուին :

ժամանակին է պատմուճանը վերցնելու, թեզանիքները բարձրացնելու, գոգնոցը կախելու, գիտականօրէն մարդկային սրտին հերձուժը կատարելու համար:

Արուեստագէտը պէտք չէ որ այլ եւս բնութեան կոյր եւ սարուկ նմանողութեամբ գոհանայ, ընդօրինակելով, արագըրելով կտաւին, մարմարիոնին վրայ՝ կամ թարգմանելով գրութեանց մէջ կեանքի երեւոյթները եւ արտայայտութիւնները: Պարտի անցած դարձածին ինչո՞ւն գիտնալ, այսինքն պատճառներու եւ երեւոյթներու կապակցութիւնները. համոզուելու է թէ բնութեան մէջ գիպուածը դեր չունի եւ իւրաքանչիւր երեւոյթ իր գոյութեան պատճառը ունի:

Դէմքին կարմրութիւնը՝ որ հոգիի մաքրութեան եւ անմեղութեան իտէալ արտայայտութիւնը նկատուած է՝ գիպուածական երեւոյթ մը չէ եւ չէ շնորհուած մարդուս իբր նշան ազնուութեան եւ կամ իբր հայելի մը որ ցոլացընէ սրտին յուզումները, այլ մարմնոյն գործունէութեանց ճակատագրային մէկ հետեւանքը, որ կամքի ուժով ո՛չ կը ծնի եւ ո՛չ ալ կը ջնջուի:

Մարդուս եւ ամբողջ կենդանիներու կարմրութեան պատճառը պէտք է նկատել նոյն իսկ մարմնոյն կազմածը, էութիւնը եւ արեան էակներու գործունէութիւնը մարմնի գործարաններու մէջ:

Ընդհակառակը Տարուին կը կարծէր թէ կարմրութիւնը կամքի շնորհիւ ընդունուած արտայայտութիւն մըն է: Իր տուած բացատրութիւնը անընդունելի է եւ կը համարձակիմ հաւատալ թէ Տարուին անգամ պիտի ընդունէր իմ դաղափարը՝ որ աւելի ճշգրիտ կը թուի ու նաեւ աւելի համաձայն յեղաշրջման (évolution) վարդապետութեան հետ: Մէկ խօսքով իմ բացատրութիւնը աւելի Տարուինալիան է, եթէ կարելի է այսպէս ըսել:

Ինչո՞ւ կը կարմրինք, պիտի հարցնէ նա՝ որ կ'ուզէ գիտնալ երեւոյթներու պատճառները: Ինչո՞ւ քանի մը պարագաներու մէջ արիւնը կը խուժէ առատօրէն ճագարին ախանջներուն մէջ եւ մարդուն դէմքին վրայ:

Այս հարցումին պատասխանը աւելի գիւրաւ եւ լաւ հասկնալի պիտի ըլլայ, երբ պիտի հաստատենք թէ ուղեղն ալ կը կարմրի յուզման միջոցին:

Կեանքը պահելու համար այն գործարաններուն մէջ

ուր յուզումը առաջ եկած է, արեան շնչերակներու ընդլայնումը ստիպողական է: Երբ մեր ձեռքը ուժով մը կը սեղմին եւ կամ երբ հարուած մը կ'ընդունինք, գիտենք որ ճնշուած կամ հարուած ընդունած տեղը աւելի կը կարմրի: Արեան շրջանի այս փոփոխութիւնը ստիպողական է որպէս զի ճնշուած տեղին մէջ արիւնը աւելի առատ համախմբուի եւ սննդառութեամբ վնասը անմիջապէս նորոգուի: Միեւնոյն երեւոյթները տեղի կ'ունենան նաեւ ուղեղին մեջ, հոպեկան գործողութեանց մէջ: Յուզումները ուղեղին քիմիական երեւոյթներուն մէջ աւելի մեծ գործունէութիւն մը կը պատճառեն. բջիջներու սննդառութիւնը կը փոխուի եւ այսպէս ջղային ուժի սպառումն ալ կ'արագանայ, որով ուղեղին երակները ընդլայնելով ջղային գրութեան գործունէութիւնները կ'ապահովեն ի շնորհս արեան առատ համախմբումին:

Պէտք է մարմնոյ կազմածին յատկութիւններուն մէջ փնտռել այն ամէն երեւոյթներու պատճառը որ Տարուինի համեմատ կախում ունի արտաքին սպրակներէ, միջավայրէն կամ ընտրութենէն: Պիտի ջանանք դիպուածական պատճառներու կարեւորութիւնը ջնջել որոնք մեծ տեղ մը կը բռնեն Տարուինի գրութեան մէջ: Պիտի տեսնենք որ գործարանաւոր մարմինները կը կազմուին, կը կերպարափոխուին լոկ մեքենական պատճառներ ունենալով: Աշխատութիւնը կը կատարելագործէ գործարանները: Աշխատող մասերը աւելի խոր փոփոխութիւններ կը կրեն եւ իրենց կազմածն ալ օր ըստ օրէ աւելի կատարեալ կ'ըլլայ*):

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

Ֆրանսա, Մոնփէլիէ

*) Այս յոռաջաբանը հրատարակելով Մօսօի գեղեցիկ գործին ճաշակը տուած հղանք մեր ընթերցողներուն: «Համալսարան» ի ծաւալը եթէ ներէր ամբողջ գործը սիրով պիտի հրատարակէինք: Մ. Խ.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բարոյական, Ուսումնական, Արուեստագիտական
Կը խմբագրուի Վիեննայի Մխիթարեան Հայրերէն: Բաժ-
նեցինը կանխիկ է՝ ամէն տեղի համար 10 ֆռանք. դիմել՝
Rédaction de la Revue **Handess**

Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՄՍՈՒԳԻՐ

Բաժանորդագրութիւնը 10 ֆռանք կանխիկ: Դիմել
Rédaction de la Revue **Pazmaveb**

(Italie) Venise (St-Lazare)

ԼՈՒՄԱՅ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Խմբագիր-հրատարակիչ Գիւտ Ա. քնյ. Աղանեանց: Ներ-
կայ 1902 թուի յունուարի 1-ից հրատարակվում է երկու
ամիսը մի անգամ:

Հասցէ՝ Tiflis, rédaction du journal arménien **Louma**

Ա. Ղ. Բ. Ի. Ի. Ր.

Մանկական եւ Մանկախարժական Աւեսքերք եւ

ՏԱՐԱԶ

Գրական եւ Գեղարուեստական Շարքարքերք
(Խմբագիր հրատարակիչ Տ. Նազարեան)

Աղբիւրի տարեկան գինն է 3 ռուբլի, իսկ **Saruz** 6 ռբ.
Հասցէ՝ Rédaction des journaux **Agbur-Taraz**
Tiflis (Russie)

EST - OUEST

ԳՈՐԴԱԿԱԼՈՒԹԻՒՆ (AGENCE) ԹՂԹԱԿՑԱԿԱՆ, ՀԵՌԱԳՐԱԿԱՆ
ԵՒ

ՏՆԼԵԾՕՆԱԿԱՆ, ՀԵՏԵՒԵԱԼ ԲԱԺԻՆՆԵՐՈՎ

I. Գաղափական, Ընկերական, ելն. խնդիրներ, —
II. Ֆինանսական եւ Խնայողական խնդիրներ, — III. Վաճա-
րականական խնդիրներ, — IV. Յայտարարութեան (Publicité)
վերաբերող խնդիրներ:

Թղթակցութիւն ամէն լեզուով՝ շաբաթը 2—3 անգամ
կամ ամէնօրեայ ըստ կարեւորութեան թերթին եւ տեղւոյն:
Մասնաւոր ճիւղեր ամէն երկրի համար:

Հասցի:

Փոստի համար՝ 18, Rue Denfert-Rochereau. Paris (Ve)

Հեռագրի համար՝ Davibey — Paris

Տելեֆոն՝ 814—54

Ընդհանուր Տնօրէն
ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԹ-ԲԷԿ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ
Բ. ՇՐՋԱՆ

Իւրաքանչիւր Շրջանին մէջ կուտայ 12 թիւ: Բաժանորդագրութիւնը թիւի վրայ է:

12 թիւ ամեն երկիր 10 ֆրանք, (4 ռուբլի, 2 տոլար):
6 » » » 6 » (2 1/2 » 1տ. 20 ս.):

Տաճկաստանի եւ Պարսկաստանի համար 8 ֆրանք (40 ղրշ. ոսկեդրամ):
6 թիւի բաժանորդագրութիւնը այս վերջին երկիրներու համար 5 ֆրանք (25 ղրուշ):

Այն կրթական հաստատութիւնները՝ որոնք լայն պիւտճէ մը չունին, կրնան ստանալ 12 թիւը կէս բաժնեգինով, այսինքն 6 ֆրանքի:

Նամակ կամ բաժնեգին եւ թղթակցութիւն ղրկել Տնօրէն-խմբագրին՝

Missac Baghdassarian

4, rue Ortolan — PARIS (5)

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ախլաթ (Ռուսիա)	Արժ. Տ. Ներսէս քհյ. Համբարձումեանց
Իսպոլ (Պարսկ.)	Տօք. Կարապետ Փաշաեան
Եգիպտոս (Գահիրէ)	Պարոն Միհրան Չրաքեան
Երեւան (Ռուսիա)	Պարոն Եղիա Տ. Արիստակէսեան
Երզնկա	Պարոն Լոյսիկ Տ. Ստեփանեան (փ.գ. Գառնիկ Մ. ձիգմէճեան)
Թիֆլիս (Ռուսիա)	Արժ. Տ. Եղնիկ Աւագ քհյ. Երզնկեանց
Թոֆաթ	Պարոն Խաչիկ Թաշճեան
Լին (Ամերիկա)	Պարոն Յակոբ Պէրպէրեան
Խարբերդ	Պարոն Ռուբէն Զարգարեան
Նիկոնիդիս	Պարոն Գառնիկ Ա. Պաղտատարեան
Տրապիզոն	Պարոն Պ. Սիմաւոնեան

ՏՊԱՐԱՆ - ԳՐԱՏՈՒՆ ” ՀԱՄԱԼՍԱՐԱՆ” Ի

Ա. Երջան Համալսարանի (12 թիւ	առանց կազմի)	10 ֆրանք
» » »	թղթակազմ	12 »
» » »	կէս կաշի	15 »
» » »	կէս կաշի ոսկեզօծ	20 »
Յրանձնայ պատկերագրող բառարան (A—H)		
(Իշխան Գ. Լուսինեան)		25 »
Դիւցա՛ղնօրէն (Ատոմ Եարճանեան)	1 եւ 2	»
Մկա Վախ Չունիօ (Գիւլստանցի)	—	50սն/թ
Ուխտ (Բէլլուբէկեան)	1	»
Այս հրատարակութիւնները մեծաքանակ գնողներուն գոնացուցիչ գեղջ կը լինի:		

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի (Պ. Միսսս) սպարանին մէջ կը լինին ամեն տեսակ սպարազրական աշխատութիւններ խիստ խնամուած կերպով եւ պահանջուած կատարեալ նրբութեամբ:

Յանձնարարութիւնները կանխիկ են եւ կը կատարուին ճշգրտութեամբ:

«Համալսարան»ի Ա. Երջանի համարները սպառելու վրայ են, մեր այն նոր բաժանորդները՝ որ կը փափաքին ունենալ «Համալսարան»ի Ա. Երջանի համարները, կը վճարեն քաջառաքար «կէս կաշի» կազմին համար 12 ֆրանք եւ «կէս կաշի ոսկեզօծ»ին 15 ֆրանք:

Տպարան-Գրատան վերաբերեալ ամեն յանձնարարութիւն ղրկել խմբագրապետին անուան: